

21). Իր նուիրակութեան ժամանակ կ'այցելէ Լաթաքրա և վանքին եկեղեց. անօթները կը ցուցակազրէ. և կը զրէ հետեւեալ յիշատակարանը, որուն ընդօրինակութիւնն 1864ին Զաքարիա վրդ. Մալկարացիին՝ ըրած է ուրիշ տետրի մը մէջ. «Այս է անօթն եկեղեցւոյն Ս. Աստուածածնին ի Լաթաքրա. ի Հոգեատան: Գրեցաւ թուին ՌՄԿԸ (= 1819)ին Մարտի 24ին ձեռամբ տեառն Յովհաննէս րաբունւոյն որ նուիրակ էր Վանայ թեմին եւ վիճակին որ զվախֆն ազատեաց եւ զայս բանս հաստատեաց»: (Սխր. Տար. 1925. էջ 217): Յովհաննէս վրդ. կը վախճանի 1854ին. Երուսաղէմի վարդապետներուն համար 1821ին կը շինէ հոգեւուն մը Կարնոյ մէջ. 1854ին կը վախճանի Ս. Յակոբի վանքին մէջ. իր տապանագիրն է հետեւեալը.

«Աստ եղեալ կան ոսկերք Բաղիշեցի Յովհաննէս վրդ. ի երբեմն նուիրակ Վասպուրական աշխարհին որ հանգեաւ ի տէր յամի տեառն 1854ին»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ՊՈԿԼԱՆՑԻ (Մշոյ սանսան). — Մբ. Կարնոյ Առ. Պետրոս եպս. Կիւրացիին որ կը պաշտօնավարէր 1830ին. եկեղեցւոյ մէջ քարոզելու կարողութիւն չունենալուն համար. իբր քաջ արուն հովիւ եւ skr հոգեւոր լաւ քարոզիչ վարդապետ մը կը պատահէր իր մօտ. որ եր Բոկրակցի Յովհաննէս վրդը. բնիկ միաբան Ս. Երուսաղէմի հրաշարի արուիւն. որ էր նաև առաջնորդական փոխանորդ, ամէն կիւրակէ առաւօտ կը քարոզէր»: (Բարձր Հայք. էջ 122):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. — Մբ. 1843ին ժամօրհնող:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. — Մբ. 1750ին Յակոբ պարք. Նալեանի կոնդակովը առաջնորդ կը կարգուի Սեբաստիոյ Ս. Հրեշտակապետ վանքին և դուրս կը վտարէ Աստուածատուր վրդ. ի ազականները. 1778ին եպս. կը ձեռնադրուի ի Ս. Էջմիածին. Ս. Նշան վանքին առաջնորդութիւնը ձեռք ձգելու համար զանազան պատրուակներով վէճի կը բռնուի իր միաբանակցին՝ Յակոբ վրդ. Արմատանցիին հետ՝ որ Պոլիս կը գիմէ և իր պաշտօնին վրայ կը հաստատուի: Յովհ. վրդ. կը բանտարկուի Սեբաստիոյ Հաճի փաշայէն. բայց միջոցը կը զտնէ և բանտէն կ'ազատի. ու Պոլիս կը գիմէ բազմաթիւ ստորագրութիւններով. Յակոբ եպս. ի հրաժարման վրայ, Սեբաստիոյ վիճակը կը արուի